Երկրի կեանքի կայունացումը զգացում էր և ժողովրդի, մանաւանդ, ոչ-հայ տարրերի վերաբերումից։ Այլևս այնքան հեշտ չէր հակապետական տարրերին ոտքի հանելը։ Այդ ցոյց տին Կարսի դէպքերը։

Տարւայ սկզբին դեռ ևս Կարսի մահմեդական շրջաններում նկատւում էր տատանում. մի մասը կողմնակից էր Հայաստանի իշխանութեան, միւսները՝ Թիւրքերի և ադրբէջանցիների դրդումով դէմ էին հայերին։ Յունւ. 12-ին Զարուշատի, Աղբաբայի և Զըլդըրի ներկայացուցիչները ժողով գումարեցին Գեղարչին գիւղում և որոշեցին. 1) դադարեցնել առևտրական և ամէն յարաբերութիւն հայերի հետ. 2) արտաքսել հայկական իշխանութիւնը և կազմել տեղական իշխանութիւն՝ Ադրբէջանից ստացած դրամով. 3) 18—40 տարեկանների զօրաշարժ անել և մարդել Թիւրք սպաների ղեկավարութեան տակ. 4) երկաթուղու շրջանում և Ղըզըլ-Զախչախում դնել սեփական պահակներ։

Յունւարի կէսերին Զարուշատ եկան մի քանի ադրբէջանցի սպաներ Նազարալիևի գլխաւորութեամբ, խոշոր գումարներով, և սկսւեցին հակահայ յարձակումները։ Յունւ. 20-ին Իրիշ գիւղում սպանւեցին 8 հայեր։ Յունւ. 24-ին Զարուշատից և միւս շրջաններից դուրս քշւեց հայ պաշտօնէութիւնն ու միլիցիան։ Թուրքերը դիրքեր գրաւեցին Զուրգունայում և դէպի Արդահան ուղղեցին 500 ձիաւորներ։ Յունւ. 27-ին 400 զինւած Թուրքեր գրաւեցին Շայնալար գիւղը։ Զարուշատը, Աղբաբան և Զըլդըրը ապստամբեցին Հայաստանի դէմ։ Այս շրջաններում բաւական ուժեղ էին և Հայաստանի կուսակիցները, բայց Թիւրք-ադրբէջանցի գործակալներից ահաբեկւած՝ չէին կարող արտայայտւել։

Կառավարութիւնը ամէն միջոց սպառելուց յետոյ, հրաման տւեց զօրքին զէնքի դիմելու։ Հակառակ արտակարգ ձեան ու սառնամանիքին, զօրավար Յովսէփեանի զօրամասերը արագութեամբ անցան գիւղից գիւղ, և ջախջախիչ պարտութեան մատնելով թշնամուն՝ փետր. 15-ին գրաւեցին բոլոր ըմբոստ վայրերը։ Խռովարար պարագլուխները փախան, և Զարուշատից, Աղբաբայից ու Զըլդըրից 25 ներկայացուցիչներ եկան յայտնելու ժողովրդի հնազանդութիւնը։ Շրջանը հանգստացաւ։

Հանգիստ չմնաց, սակայն, Ադրբէջանը։ Այս դէպքերի առթիւ, մարտ 8-ին Ադրբէջանի Խորհրդարանում Մուսաւաթ, Էհրար և Իթթիհատ կուսակցութիւններին պատկանող 21 պատգամաւորներ մացրին հարցապնդում, որի մէջ ասում էին, թէ՝ «հայկական կառավարութիւնը, զինաթափութեան պատրւակով, քարուքանդ է անում Կարսի շրջանի մահմեդական գիւղերը և բնաջնջում մահմեդական խաղաղ բնակչութիւնը։ Մօտ 10,000 մահմեդականներ, հակառակ որ յոժար կամքով յանձնել են զէնքերը, շրջապատւած են կանոնաւոր հայ զօրքերով և ենթարկւում են վերջնական կոտորածի»։

Նոյն օրը, ժամը 12-ին, նշանակւեց Խորհրդարանի արտակարգ նիստ, ուր վարչապետ Ուսուպբէգովը տւեց մանրամասն բացատրութիւններ, որից յետոյ տեղի ունեցան փոթորկայոյզ վիճաբանութիւններ։ Գրեթէ անխտիր,